ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԿՐՏՈՒՄՅԱՆ ՎԱՉԳԵՆ ՄԵԼՍԻ

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԳՈՐԾԱՐԱՐԻ ՍՈՑԻԱԼ – ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

ԺԹ.00.03. <<Սոցիալականհոգեբանություն, (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, տարիքային, մանկավարժական, խմբային գործունեություն)>>մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ - 2019

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժականհամալսարանում

Գիտական ղեկավար՝հոգեբանական գիտությունների դոկտոր
Սրբուհի Ռաֆիկի Գևորգյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝հոգեբանական գիտությունների դոկտոր
Նաիրա Ռաֆիկի Հակոբյան

հոգեբանական գիտությունների թեկնածու
Նարինե Ասքանազի Հարությունյան

ԱռաջատարԳործնական հոգեբանության և **կազմակերպություն՝**սոցիոլոգիայի **Ուրարտու** համալսարան

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2019թ.-ի մայիսի 30-ին՝ժամը 14:00-ին,Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈԿ-ի հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ.Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2019թ.-ի ապրիլի 15-ին:

Հոգեբանության064 մասնագիտական
Խորհրդի գիտական քարտուղար,
Հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Երեմի** **Վարդանյան**

Թեմայի արդիականությունը: Վերջին տասնամյակներին ՀՀ տնտեսական և քաղաքական համակարգերի կտրուկ փոփոխությունների պատճառով օբյեկտիվորեն առաջացան սոցիալ-տնտեսական, ռազմաքաղաքական, սոցիալ-հոգեբանական նոր հարաբերություններ: Կենսագործունեության նոր պայմաններում գոյատևման համար շատերը փոխեցին իրենց մասնագիտությունը: Չնայած բիզնես բնագավառում գոյություն ունեցող առանձնահատուկ դժվարությաուններ գոյությանը (սնանկացման մեծ վտանգը, դրա հետ կապված լարվածության, տագնապի, տևական սթրեսի վիճակը, շուկայական օրենքների չիմացությունը, հումքի ձեռքբերման դժվարությունները և այլն), գործարար միջավայրում հայտնվեցին հաջողակ մարդիկ, որոնք այլ բնագավառներում աչքի չէին ընկել: Այդպիսի պայմաններում մրցակցության դիմանալու, գործունեության մեջ հաջողություններ գրանցելու գործընթացը ուղիղ կախվածություն է ձեռք բերում գործարար անձի հոգեբանական կերտվածքից, նրա ֆունկցիոնալ հնարավորությունների լիարժեք ներդրման առանձնահատկություններից:ՈՒստի օրեցօր ավելացող դժվարությունների, առկա և հավանական սպառնալիքների, վտանգների պայմաններում կայուն եկամուտների ապահովումը, <<լավ մարզավիճակում>> մնալը գործարար անձանց համար հանդիսանում է գոյատևման ամենօրյա կենսական պահանջ: Այս և բազմաթիվ հարցերի լուծման ու գիտական հիմնավորման համար առաջադրվող հիմնախնդիրը մեր ժամանակներում ավելի քան կարևորություն է ձեռք բերում:

Աշխատանքի արդիականությունն ու կարևորությունը կայանում է նաև նրանում, որ սույն աշխատանքում գործարար անձի հաջողությունների ապահովման հիմնախնդիրը դիտարկվում է նրա անձի հոգեբանական խորքային նախադրյալների ֆունկցիոնալ հնարավորությունների ուսումնասիրության տեսանկյունից: Մյուս կողմից՝ մասնագիտական գրականության ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ գոյություն ունեցող հետազոտությունները առնչվում են հիմնախնդրի զուտ տնտեսական, սոցիալ-հոգեբանական, քաղաքական կողմերին: Այս տեսանկյունից՝ փոխակերպվող հասարակության պայմաններում գործարար անձի հաջողությունների ապահովման անձնային կողմերի հոգեֆիզիոլոգիական հիմնախնդիրները քիչ են ուսումնասիրված, կամ շատ խնդիրներ լիարժեք լուսաբանված չեն:Մասնագիտական գրականության ուսումնասիրությունները ցույց են տալիս (Բ. Ֆ. Լոմով, Յու. Մ. Զաբռոդին, Ա. Լ. Ժուրավլյով, Վ. Գ. Զազիկին, Ս. Ռ. Գևորգյան, Ն. Ռ. Հակոբյան, Ս. Ս. Խուդոյան, Ա. Յ. Անցուպով, Ա. Ի. Շիպիլով), որ գոյություն ունեցող հետազոտությունների ճնշող մեծամասնությունը վերաբերվում է հիմնախնդրի զուտ տնտեսական, սոցիալ-հոգեբանական, քաղաքական կողմերին: Փոխակերպվող հասարակությունում արդյունավետ գործարարի հոգեկան ոլորտի խորքային նախադրյալների ուսումնասիրության հիմնախնդիրը լիարժեք ուսումնասիրված չէ: Հիմնախնդրի վերաբերյալ ամբողջական պատկերացումների ապահովումը պահանջում է ինչպես նոր ժամանակների, այնպես էլ գործարարի անձի առանձնահատկությունների ուսումնասիրման նորովի մոտեցում;

Ատենախոսության համար տեսական և գիտամեթոդաբանական հիմք են հանդիսացել գործունեության տեսությունը (Ա. Ն. Լեոնտև, Ա. Լ. Ռուբինշտեյն, Բ. Գ. Անանև, Ա. Գ. Ասմոլով), փոխակերպվող հասարակությունում անձի հարմարման տեսությունները (Ն. Ռ.

Հակոբյան, Ս. Ս. Խուդոյան, Ա. Գ. Ասմոլով, Ի. Գ. Մալկինա-Պիխ, Մ. Ա. Կոտիկ), գործունեության տարբեր պայմաններում անձի կենսագործունեության պահպանման, գործունեության արդյունավետության ապահովման տեսությունները (Բ. Ֆ. Լոմով, Յու. Մ. Զաբռոդին, Ց. Պ. Կորոլենկո, Մ. Պ. Մկրտումյան), ֆունկցիոնալ համակարգության տեսությունը (Պ. Անոխին, Ա. Լ. Լեբեդևա, Լ. Պ. Դիկայա, Վ. Պ. Մարիշչուկ) գործարար ոլորտի տեսություններ (Ա. Լ. Ժուրավլյով, Վ. Գ. Զազիկին), ղեկավարման ու կառավարման ոլորտի տեսություններ (Ս. Ռ. Գևորգյան, Ա. Յ. Անցուպով, Ա. Լ. Ժուրավլյով, Վ. Գ. Զազիկին, Ա. Ի. Շիպիլյով) և այլն: Դրանցում քննարկվում են անձի ակտիվության, նրա հավակնությունների դրդապատճառների ուղղվածությունը, գործունեության առանձնահատկությունների, անձի հոգեֆիզիոլոգիական համակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունների դրսևորման օրինաչափությունները և այլն:

Ատենախոսության մեջ առաջ քաշված գիտական խնդիրները ուսումնասիրվում են անձի խորքային նախադրյալների ֆունկցիոնալ հնարավորությունների հետազոտությունների հիման վրա: Հետազոտության արդյունքները վերլուծվում են Պ. Անոխինի ֆունկցիոնալ համակարգության տեսության գաղափարների հիման վրա: Ըստ այս տեսության՝ օրգանիզմին, հոգեկան ոլորտին առաջադրվող հիմնական ծանրաբեռնվածությունը կրող ենթահամակարգերի ֆունկցիոնալ հնարավորությունները պայմանավորված են նույն կառուցվածքում գոյություն ունեցող բաղադրամասերի ֆունկցիոնալ վիճակներով [12, էջ 81]: Պ. Անոխինի ֆունկցիոնալ տեսության այս գաղափարները լիովին համապատասխանում են հետազոտության նպատակի և խնդիրների իրականացման պահանջներին:

Ատենախոսական աշխատանքը կառուցված է գիտական հետազոտությունների իրականացման պահանջներին ներկայացվող դետերմինիզմի, ամբողջականության, համակարգայնության գիտական սկզբունքների հիման վրա, իսկ արդյունքները հիմնավորվում են մաթեմատիկական վիճակագրության մեթոդների գիտական վերլուծությունների հիմնավորմամբ:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ փոխակերպվող հասարակությունում գործարար անձի հաջողությունները պայմանավորված են նրա հոգեկան ոլորտի խորքային նախադրյալների գործառութային հնարավորությունների առանձնահատուկ համագործակցությամբ, դրանց գործառութային վիճակների բարձր արտահայտվածությամբ:

Ենթադրվում է նաև, որ գործարարների գործառութային հնարավորությունների ակտիվացման հիմքում ընկած են նրանց նյարդահոգեկան կայունությունը, անձի կամային մոբիլիզացման, հոգեկան աշխատունակության,գործողությունների համագործակցման հնարավորությունները:

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել փոխակերպվող հասարակությունում գործարար անձանց հաջողությունները պայմանավորող հոգեկան ոլորտի խորքային նախադրյալները:

Հետազոտության օբեկտը գործարար անձանց գործունեության արդյունավետությունն ապահովող հոգեկան ոլորտի առանձնահատկություններն են:

Հետազոտության առարկան հանդիսանում է գործարար անձանց հուզական ոլորտի, նյարդահոգեկան կայունության, հոգեկան աշխատունակության, մոբիլիզացիոն կարո-ղությունների դրսևորումները:

Հետազոտության խնդիրներն են.

1. Մասնագիտական գրականության ուսումնասիրման միջոցով հիմնախնդրի տեսական և գործնական կողմերի, գիտական տեսակետների, հիմնախնդրի լուծման ժամանակակից մոտեցումների, առաջավոր գաղափարների վերլուծություն:

2. Հետազոտության կազմակերպման ռազմավարության մշակում, մեթոդների, համակազմի ընտրություն, հետազոտության պայմանների ապահովում:

3. Գործարար անձանց գործունեության առանձնահատկությունների, նրանց վրա անդրադարձող բացասական գործոնների բացահայտում:

4. Գործարարների հոգեվիճակների դրսևորման, անձի հարմարվողականության, սթրեսակայունությանմակարդակների ուսումնասիրում:

5. Գործարար անձանց հոգեկան աշխատունակության, մոբիլիզացիոն կարողությունների, հոգեկան գործընթացների արտահայտվածության ուսումնասիրում:

Հետազոտության մեթոդները:

1. Փոխակերպվողհասարակությունումգործարարներիգործունեությանևանձիվրաազդողբացասականգործոններիբացահայտմանհարցաթերթիկ /հավելված 1/:

2. Հաջողակգործարարիսոցիալ-հոգեբանականնկարագրիբացահայտմանհարցաթերթիկ /հավելված 2/:

3. Ժ.Թեյլորիանձիընդհանուրտագնապայնությանմակարդակիհետազոտ-մանսանդղակ[115, էջ 27]:

4. Գրաֆիկականտեպինգ-թեստ, (տեղայնացումըՎ. Իլյինի) [2, էջ 64]:

5. Սթրեսումնյարդահոգեկանկայունությանևդեզադապտացիայիռիսկիորոշմանմեթոդ[115, էջ 61]:

6.Շուլտեի(կարմիր և սև թվերի) թվայինաղյուսակները[115, էջ 56]:

7. Հետազոտության արդյունքների մշակման մաթեմատիկական մեթոդները[4,8,16, 66, 114, 123]:

Հետազոտության իրականացման պայմանները: Հետազոտությունը իրականացվել է 2012-2013 թվականների ընթացքում: Աշխատանքների կազմակերպումը ընթացել է երկու փուլով.

Առաջին փուլում իրականացվել են փոխակերպվող հասարակությունում գործարար անձանց գործունեության արդյունավետության և հոգեկան ակտիվության վրա անդրադարձող գործոնների հետազոտական աշխատանքները, ինչպես նաև բացահայտվել են հաջողակ գործարարների սոցիալ-հոգեբանական նկարագիրը:

Երկրորդ փուլում իրականացվել են կայուն եկամուտներ ունեցող գործարար անձանց հաջողությունների խորքային նախադրյալների ուսումնասիրման աշխատանքները:

Հետազոտության համակազմը: Հետազոտության համակազմում ընդգրկվել են Երևանի տարբեր առևտրական ձեռնարկությունների 300 գործարար անձիք (120 կին և 180 տղամարդ): Որպես հիմնական հետազոտական խումբ, գործարարների ընդհանուր խմբից առանձնացվել են կայուն եկամուտներ ունեցող 90 հաջողակ գործարարների (45 կին և 45 տղամարդ): Մնացած 210 գործարարներից, որպես ստուգիչ խումբ, պատահական կարգով ընտրվել են 45-ական կին և տղամարդ:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. Փոխակերպվող հասարակությունը իր սոցիալ-տնտեսական, մշակութային, բարոյահոգեբանական անկանխատեսելի փոփոխությունների բնութագրերով՝ հանդիսանում է գործարար բնագավառի զարգացման անբարենպաստ միջավայր:

2. Բիզնես բնագավառը իրեն բնորոշ կոշտ մրցակցության բնութագրերով, սոցիալ-հոգեբանական բարդ հարաբերությունների առանձնահատկություններով հանդիսանում է գործարար անձանց բնական ընտրության միջավայր:

3. Փոխակերպվող հասարակության անբարենպաստ զարգացումները անդրադառնալով գործարար անձանց վրա, ձևավորում են բնագավառի պահանջներին համապատասխան հոգեբանական ինքնատիպ կերտվածք և նկարագիր:

4. Բիզնեսմենի արդյունավետության ու հաջողությունների կայունության հիմքում ընկած են նրա հոգեկան ոլորտի խորքային նախադրյալների առանձնահատկությունները, գործողությունների կատարման հիմնական <<աշխատանքային ծանրաբեռնվածությունը>> կրող ֆունկցիոնալ համակարգերը:

5. Բիզնեսում կայուն հաջողությունները պայմանավորված են գործարար անձանց հուզական վիճակների կայունությամբ, սթրեսում դրսևորվող արգելադիմացկունությամբ, հարմարման առանձնահատկություններով, մտավոր հնարավորությունների, մոբիլիզացման կարողությունների և խնդրահարույց իրավիճակում ինքնավերահսկման կայուն բնութագրերով:

6. Հաջողակ գործարարի հոգեբանական նկարագրի հիմքում ընկած են նրա հոգեկան աշխատունակությունը, կամային մոբիլիզացման հնարավորությունները, արագ և ճշգրիտ որոշումների կայացման ընդունակությունները, անձի ճանաչողական գործընթացների արդյունավետ գործարկման անհատական հնարավորությունները:

Աշխատանքի տեսական նշանակությունը: Տեսական նյութի համակարգվածվերլուծությունները կարող են լույս սփռել անցումային հասարակության պայմաններում արժեհամակարգի, մարդկանց գիտակցության փոփոխությունների, նոր տնտեսական հարաբերություններում անձի մասնագիտական ու սոցիալ-հոգեբանական ներգրավվման, հիմնախնդիրների չլուսաբանված կողմերի վրա:

Աշխատանքի գիտական նորույթը: Մասնագիտական գրականության ուսումնասիրությունների հիման վրա տրվել է անցումային հասարակության պայմաններում բիզնես բնագավառում ձևավորվող հակասությունների հոգեբանական օրինաչափությունները, գործարար միջավայրում, անձի հոգեկանում առաջացող նորագոյացությունների հիմնարար բնութագրերը:

Հետազոտության արդյունքում ձևավորվել է անցումային հասարակությունում հաջողակ գործարարի կոնցեպտուալ մոդելը: Բացահայտվել են գործարար անձի ակտիվության, սոցիալ-հոգեբանական կապերի փոփոխության նորովի ձևափոխումներն ու հաջողության հասնելու մասնագիտական, կազմակերպչական ու անձնային կոմպետենցիաների խորքային նախադրյալները:

Բացահայտվել են գործարարների հոգեկան ոլորտի հենքային բաղադրամասերի ֆունկցիոնալ համակարգն ու դրանց հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները (հոգեկան կայունության, գործողություններում արագ մոբիլիզացման ու որոշումների կայացման գործընթացների դինամիկան): Բացահայտվել են նաև անցումային

հասարակությունում գործարար անձանց հոգեկան աշխատունակության բաղադրիչները, գործունեության արդյունավետությունն ապահովող անձի խորքային նախադրյալների համախումբը:

Աշխատանքի գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները հնարավորություն են տալիս ստեղծել հաջողակ գործարարի կոնցեպտուալ մոդելը, ինչպես նաև իրականացնել գործարար անձանց հոգեբանական ընտրության գործընթացը, մշակել բացասական փոփոխությունների կանխարգելման աշխատանքային արդյունավետ ծրագրեր:

Հետազոտության մեթոդների համակարգը հնարավորություն է տալիս գործունեության ընթացքում բացահայտել գործարար անձանց հոգեկան աշխատունակության դինամիկան, ժամանակի ընթացքում տեղի ունեցող փոփոխություններն ու դրանց յուրահատկությունները: Մեթոդների համակարգը կարող է հանդիսանալ գործունեության տվյալ բնագավառի մասնագիտական և հոգեբանական ընտրության գործիքակազմ:

Հետազոտության հավաստիությունն ու հիմնավորվածությունը: Ատենախոսությունում ներառված գիտական դրույթները, հետազոտության արդյունքների վերլուծություններն ու եզրակացությունները հիմնավորվում են աշխատանքում կիրառված բազմաթիվ գիտական աղբյուրների, հետազոտության մեթոդների օգտագործման, և դրանց արդյունքների վերլուծության միջոցով, ինչպես նաև մաթեմատիկական վիճակագրական մեթոդների կուռ համակարգի կիրառմամբ:

Ատենախոսության նյութերը բազմիցս քննարկվել են զարգացման և կիրառական հոգեբանության հոգեբանության, տնտեսագիտության ֆակուլտետներ ու բաժիններ ունեցող ԲՈՒՀ-երում, գործարար ոլորտում՝ որպես գործարար անձանց հոգեբանական ընտրության, ինչպես նաևխնդրահարույց հոգեվիճակների առաջացման դեպքերում նրանց հոգեբանական ուղեկցման և վերահսկման գիտա-գործնական առաջարկություններ, անձնային հնարավորությունների ճանաչման համար օժանդակ նյութեր, մեթոդական հանձնարարականներ:

Հետազոտության փորձաքննությունը: Հետազոտության արդյունքները գիտական առաջարկությունների, խորհրդատվական ուղեցույցների ձևերով ներդրվել են գործարար անձանց մասնագիտական պատրաստության դասընթացներում, առևտրական կազմակերպությունների ղեկավար անձանց հետ տարվող տեսական և գործնական պատրաստության աշխատանքներում:

Հետազոտության ընթացքի և ստացված արդյունքների վերաբերյալ մշտական զեկուցումների, հաղորդումների ձևերով ելույթներ են տրվել Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի զարգացման և կիրառական հոգեբանության ամբիոնի ընդլայնված նիստերում: Հետազոտության արդյունքները գիտական զեկուցումների, հոդվածների ձևով քննարկվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում, ՀՀ ԲՈԿ-ի կողմից հավատարմագրված գիտական հանդեսներում:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից, գրականության ցանկից, ինչպես նաև հավելվածներից: Ատենախոսական աշխատանքում օգտագործվել են 146գրական աղբյուր՝ հայերեն, ռուսերեն և օտար լեզուներով: Աշխատանքի հիմնական բովանդակությունը կազմում է 135 էջ (հավելվածների հետ միասին՝ 149 էջ):

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության առաջին՝ <<Անցումայինհասարակությունումարդյունավետգործարարիսոցիալ-հոգեբանականառանձնահատկություններիհետազոտությանտեսամեթոդաբանականհիմնավորումները>>գլուխը նվիրված է անցումայինհասարակությանսոցիալ-հոգեբանականբնութագրերիվերլուծությանը, սոցիալ-տնտեսական, մշակութայինարժեքներիփոփոխությանհետևանքովհասարակականնորհարաբերություններ ի ձևավորման, անձիհոգեկանոլորտի վրադրանցազդեցությանառանձնահատկություններին: Բնագավառային հետազոտությունների համար հիմնարար մեթոդոլոգիական սկզբունք է համարվում համակարգային մոտեցումը(Ա. Անցուպով, Ա. Յակ. Բոդալև, Բ. Բոդալև, Ե. Կլիմով, Բ. Լոմով և այլք), որըդրվածէ ատենախոսության մասնագիտականգրականությանվերլուծությանհիմքում: Գործարար անձի հաջողության, գործունեության արդյունավետության հետազոտություններին նվիրված Օ. Ի. Դենիսովայի, Վ. Գ. Զազիկինի, Ե. Վ. Զայցևայի և այլոց աշխատանքներում կարևորվում են անձի գործառնական հնարավորությունները: Բազմաթիվ աշխանանքներ նվիրված են հասարակության ներսում առաջացող սոցիալ-հոգեբանական, տնտեսական, հիմնահարցերին(Բ. Ֆ. Լոմով, Յու. Մ. Զաբոռոդին, Վ. Գ. Զազիկին, Ս. Ռ. Գևորգյան, Ն. Ռ. Հակոբյան, Ս. Ս. Խուդոյան, Ա. Յ. Անցուպով, Ա. Ի. Շիպիլով), որոնցում լուսաբանվում են նաևնոր պայմաններում գործարար միջավայրում ձևավորվող սոցիալ-հոգեբանական յուրահատուկ առանձնահատկությունները: Գրականության վերլուծություններում վեր են հանվում նաև ՀՀ անցումային հասարակության բնորոշ կողմերը, տնտեսական շրջափակման, հետպատերազմական լարվածության պայմաններում հասարակության ներսում առկա փոփոխությունների, ազդեցության սոցիալ-տնտեսական, հոգեբանականառանձնահատկությունները:

Անցումայինհասարակությունումանընդհատփոփոխվողսոցիալտնտեսականպայմանները օբյեկտիվորենընկալվումենորպեսսթրեսածին: Այստեսանկյունից՝յուրաքանչյուրմարդուհամարդրանցնկատմամբհոգեբանականգնահատակ անընուղիղկախվածություն ունիհրավիճակիսուբյեկտիվ գնահատականից: Հիմնախնդիրըլուսաբանողբազմաթիվհետազոտություններում՝ այդթվումնաևԵ. Ս. Կուզմինի Վ. Մ. Շեպելի, Բ. Ֆ. Լոմովի, Յու. Պ. Պլատոնովի, Վ. Գ. Կազակովի, Գ. Մինցբերգի,Ա. Լ. Ժուրավլյովիև այլոց աշխատություններումանդրադառնում են նաև գործարար անձանց ընդհանուր և հոգեկան առողջության, ամենատարբեր իրավիճակներում գործունեության արդյունավետության ապահովման սոցիալ-հոգեբանական հնարավորությունների ստեղծման պայմաններին:

Առանձնակի կարևորվում են անցումայինհասարակությունումգործարարմիջավայրիարդյունավետղեկավարման գործընթացի կազմակերպման հոգեբանական հիմնախնդիրներին վերաբերվող գրականության վերլուծությունները (Վ.Ս.Ագապով,Վ.Ա.Բոդրով,Լ.Պ.Գրիմակ,Ա.Լ.Ժուրավլյով,Մ.Ն.Կլիմով,Վ.Ի.Մեդվեդև,Ս.Կ.Ռոշչին, Յու.Պ. Պլատոնով): Դրանցում քննարկվում են գործարարհարաբերությունների,դրամի արժեզրկման, ապրանքի գնագոյացման, սպառման, շուկաների ձեռքբերման

օրինաչափությունները, բնագավառինառնչվողմարդկանցշահերի բախման առանձնահատկությունները և այլն:

Այնուհետև վերլուծվում են ժամանակակիցառևտրատնտեսականհարաբերություններիկառավարմանչափանիշներին վերաբերվող գրականության աղբյուրները,(Ռ. Շտերնբերգ, Ա. Լ. Ժուրավլյով, Գ. Մինցբերգ Բ.Յա. Շվեդին և այլն), որոնցում կարևորվում են կադրերի ճիշտ ընտրության և նրանց միջև ակտիվ համագործակցության սկզբունքները, բիզնեսի կազմակերպման գործում ժամանակակից գիտական նվաճումների,առաջավոր տեխնալոգիաների կիրառման հարցեր, և այլն:

Այնուհետևքննարկվումենարդյունավետ գործարարի հոգեբանական դիմանկարի, գործունեության արդյունավետության ապահովման, ինքնամենեջմենթի (անձնական տեկտոլոգիան)հոգեբանական նախադրյալներիհիմնախնդիրներինվերաբերվողհայրենականևարևմտյանհեղինակներիուսումնասիրությունները: Ըստ ուսումնասիրված աղբյուրների՝ արդյունավետգործարարիկառավարչական շղթայի բոլոր բաղադրամասերը (կառավարման օբյեկտի վերլուծություն, կանխատեսում, պլանավորում, որոշման ընդունում, կազմակերպում, վերահսկողություն,) գործունեությանընթացքումձեռք են բերում կայունության հատկանիշներ և առանձնահատուկ անհատական <<գունավորում>>:Բազմաթիվ գիտնականների կողմից հաջողության հիմքումդրվումէանձնական IQ, կոնկրետ իրադրությունում նրա ստեղծագործ և պրակտիկ բանականությունը (ինտելեկտը), որը Ռ. Շտերնբերգի պնդմամբ առանձնակիտարբերվում է սովորական IQ -ից՝ ակադեմիական կամ կրթական ձեռքբերումներն ընդգծող բանականությունից:

Գրականությանվերլուծությունանամփոփվումէայնեզրակացությամբ, որանցումայինհասարակությունում,,նորմարդիկ,, ներգրավվելովբիզնեսմիջավայր, մնում են նրանք ովքեր օժտված են կամքի ուժով, բնագավառին բնորոշ հնարավորություններով, ինքնակառավարման, միջավայրում տեղի ունեցող փոփոխությունների կանխատեսման, ռիսկային որոշումների կայացման առանձնահատուկհնարավորություններով:

Երկրորդ՝<<Անցումային հասարակությունում արդյունավետ գործարարի անձի հոգեբանական նախադրյալների հետազոտության գիտական պահանջները>>գլխումներկայացվումենարդյունավետ գործարարի անձի հոգեբանական նախադրյալների էմպիրիկ հետազոտության գիտական պահանջները, սկզբունքներն ու մեթոդները:Գիտականորենհիմնավորվումենանցումայինհասարակությանպայմաններումբիզնեսբնագավառիառանձնահատկություններնուհարաբերություններիկենտրոնումգտնվողանձիսոցիալ-հոգեբանականառանձնահատկությունները: Առաջադրվումենհետազոտություններիկազմակերպմանռազմավարությունը, որըհիմնվումէանձի խորքային հնարավորությունների ամբողջականբնութագրերիհետազոտմանպահանջներիիրականացմանվրա: Ելնելովանձիօրգանիզմիամբողջականությանևուսումնասիրմանհամակարգայինմոտեցմանպահանջներից, հիմնավորվումենևահետազոտությանհամակազմի, մեթոդներիընտրության, հետազոտությանկազմակերպմանգործընթացներիններկայացվողգիտականպահանջները:

Երրորդ՝<<Անցումային հասարակությունում արդյունավետ գործարարի հոգեբանական նախադրյալներիհետազոտության արդյունքներիվերլուծությունը>>գլխումներկայացվումենհետազոտություններիողջընթացք նուստացվածարդյունքներիքանակականևորակականվերլուծություններիբնութագրերը, որոնցնշանակալիարժեքներըտեղակայվածենբազմաթիվգծանկարներումևաղյուսակներում:

300 բիզնեսմենների հետ արված պիլոտաժ հարցման շնորհիվ բացահայտվել են հաջողակ բիզնեսմենի սոցիալ-հոգեբանական նկարագիրը: Հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում հնարավորություն է ստեղծվել կառուցելու գործարար անձի հոգեբանական նկարագիրը:Բացասականգործոններիազդեցությանհամայնապատկերի /ֆոնի/վրահետազոտվելեն անցումային հասարակությունումհաջողակգործարարիսոցիալ-հոգեբանականնկարագրիառանձնահատկությունները որը սխեմատիկ կերպով արտահայտված է նկ. 1-ում:: Դրանցում որպես հիմնական կառուցվածքային համակարգություններ, բիզնեսում հաջողությունների հասնելու համար կարևորվում են ա/անձի կոգնիտիվ գործընթացների կառավարման ընդունակությունները, բ/կամային հատկանիշների և զգայաշարժական գործընթացների մոբիլիզացման կարողությունները, գ/ մասնագիտական ընդունակությունները, դ/ գործար միջավայրում ակտիվ կապերի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ե/ գործարար անձի սոցիալ-կազմակերպչական հատկանիշները: Ոլորտում հաջողության հասնելու աձնային հատկանիշների այդ համախումբը հիմք է հանդիսացել հաջողակ գործարարի կոնցեպտուալ մոդելի մշակմանը, ինչպես նաև անձի հոգեկան ոլորտի խորքային հնարավորությունների հետազոտման ճանապարհային քարտեզի ձևավորման աշխատանքների կազմակերպմանը:



Նկ.1. Արդյունավետգործարարիսոցիալ-հոգեբանականբնութագրիկառուցվածքայինբաղադրամասերիսխեմատիկպատկերը(ըստէքսպերտհարցումներիտվյալների):

Հետազոտության արդյունքների վերլուծության արդյունքում ուրվագծվել է հարցվողների կողմից <<հաջողակ գործարարի>> ընդհանուր բնութագիրը ներկայացնող հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների համակարգը: Դրանք բնորոշում են գործարար անձի հիմնական բնութագիրը և դրսևորվում հետևյալ անձնային և կազմակերպչական սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների ամբողջությամբ.

ա/ հանդուգն գործելաոճի ու նրբանկատ, ստեղծարար որոշումների կայացման հեռանկարայնությամբ, պարտնյորների ու կոլեկտիվի անդամների նկատմամբ դրսևորող հանդուրժողականությամբ,

բ/ իր գործի և կոլեկտիվի անդամների նկատմամբ բարձր նվիրվածությամբ. ապրումակցմամբ, հեղինակությամբ, շփվողականությամբ, անձնական խարիզմայով, նրբանկատությամբ, համբերատարությամբ, հանդուրժողականությամբ, արդարությամբ,

գ/ խնդրահարույց իրավիճակներում ցուցաբերվող մտքի ճկունությամբ, ստեղծարարությամբ, աշխատասիրությամբ զսպվածությամբ, կամային որակների բարձր արտահայտվածությամբ,

դ/ գործունեության ընթացքում գրանցած հաջողություններով, ձեռնարկության կայուն եկամուտների աճի ցուցանիշներով, կոլեկտիվի անդամների, մրցակիցների նկատմամբ հարգանքի ու պատվի զգացման, կոնֆլիկտների, արտառոց դեպքերի լուծման հնարամտությամբ, արդյունքի, եկամուտների բաշխման արդարությամբ, աշխատավարձերի արձակուրդների ժամանակին տրամադրման վստահելիությամբ,

ե/ ապագայի նկատմամբ ունեցած լավատեսությամբ, կոլեկտիվում մշակութային միջոցառումների, անձնական հավաքների կազմակերպման ավանդույթների ստեղծմամբ, խրախուսանքների կիրառման ու կոլեկտիվի անդամների նկատմամբ տարվող կադրային ճիշտ քաղաքականության կիրառման (աշխատակիցների ժամանակին առաջխաղացում, նրանց հնարավորություններին համապատասխան պաշտոնների առաջադրում և այլն) և այլն:

Հետազոտություններիշնորհիվբացահայտվելենանցումայինհասարակությունումգործունեությանարդյունավետությանևգործարարանձանցակտիվությանվրաանդրադարձողբացասական անգործոններիբնութագրերը:Բացահայտվածեննաև անբարենպաստգործոններիտևողականության և ազդեցությանուժգնությանարդյունքում առաջացող բացասական հույզերիբազմազանությունը, հոգեմարմնականհամակարգություններիաշխատանքային համագործակցության խափանմանառանձնահատկությունները, ընդհանուր և հոգեկան աշխատունակության, ինքնազգացմանփոփոխություններիյուրահատկությունները:

Հետազոտվել են նաև անցումայինհասարակությունումգործարարներիանձնայինևիրավիճակայինտագնապայնությանմակարդակիդրսևորմանառանձնահատկությունները:

Հիմնականխմբումինչպեսանձնային, այնպեսէլիրավիճակայինմակարդակներումկանանցևտղամարդկանցմոտդիտարկվումէտագնապայնությանցածրմակարդակ: Ստուգիչխմբումայդցուցանիշըանձնային մակարդակում շատբարձրէ կանանց մոտ: Իրավիճակային տագնապալիութան բարձր մակարդակ դիտարկվում է տղամարդկանց խմբերում:

Նյարդահոգեկանկայունությանառանձնահատկություններիևանհարմարվողականության ռիսկիցուցանիշներում ստուգիչխմբիճնշողմեծամասնությանմոտդիտարկվումէհոգեկանանկայունություն: 21.1%-ըցուցադրելէհոգեկան բարձր մակարդակի անկայունություն, 71.1%-ը, միջինկայունությանմակարդակ:Հիմնական խմբինորմայի ցուցանիշը կազմում է 85.5%, կամ77 մարդ:Նյարդահոգեկանանկայունությանցուցանիշներիարտահայտվածությունը գերակշռողէկանանցխմբերում: Դապայմանավորվածէկանանցկենցաղային, սոցիալ-տնտեսականծանրաբեռնվածությամբ, առավելվառարտահայտվածհուզականությամբ, տպավորվողականությամբևսեռինբնորոշայլառանձնահատկություններով:

Գործարարների հեգեմարմնականառանձնահատկություններըբնութագրողշարժումներիմաքսիմալիաճախության, գործողություններումկենտրոնացման, ռիսկիուինքնավերահսկման,կամայինմոբիլիզացմանհնարավորությունների տվյալները արտացոլված են թիվ 1 աղյուսակում: Դրանցում զգայաշարժական հնարավորությունները

Աղ.1Հետազոտվող խմբերի զգայաշարժական հակազդումների, մոբիլիզացիոն կարողությունների ցուցանիշները:

Շարժողական ակտիվության ցուցանիշները (տեպ-թեստով)	Չափումների միջին արդյունքների ցուցանիշները					
	Հիմնական խումբ			Ստուգիչ խումբ		
	կանայք	տղ.-իկ	P	կանայք	տղ.-իկ	P
Շարժ. ակտ. տեպ-թեստով	29±0.5	31±0.6	< 0.05	24±2.3	26±1.4	> 0.05
Սխալները	15±2.1	12±0.3	> 0.05	19±3.1	15±4.4	< 0.001
1-ին սերիա	45±4.4	48±0.7	< 0.001	40±1.3	42±2.4	< 0.001
Սխալները	32±3.1	28±0.6	< 0.01	34±0.8	31±4.2	< 0.001
2-րդ սերիա	52±1.3	53±0.8	< 0.001	42±2.4	47±2.1	< 0.001
Սխալները	36±1.1	33±0.7	< 0.001	40±1.6	38±1.4	< 0.001
3-րդ սերիա	49±4.6	56±0.9	< 0.001	40±3.3	44±4.6	< 0.001
Սխալները	37±5.4	25±0.9	< 0.001	37±3.5	40±1.2	< 0.001

առավել արտահայտվածենիիմնականխմբում:Նյարդա-հոգեկան կայունության,աշխատունակությանտեսանկյունից՝առավելությունըկանանցցուցանիշներն են:: Սակայն առաջադրանքների բարդեցման պայմաններում ստուգիչխմբիսխալների թիվը անհամեմատ մեծանում է: Արդյունքներիհամեմատությունիցկարելիէհանգելայնեզրակացության,

որտարբերություններըմեծչեն: Միևնույնժամանակ, ինչպեսերևումէաղյուսակի արդյունքների վերլուծությունից, համեմատածհիմնականխմբիտղամարդկանցարդյունքներիհետ, հետազոտվողխմբերումշարժողականակտիվությանառանձինցուցանիշներիմեծացում ըորակչիկազմում, բացիայդ՝ ստուգիչխմբի, ինչպեսնաևհիմնականխմբիկանանցմոտցուցադրածառանձինարդյունքներըկապված ենմեծթվովսխալներիհետ:

Կարծում ենք,որ տեպինգ թեստի ողջ ընթացքը միաժամանակկարողէ հանդիսանալ գործարար հարաբերություններում լարված, ճշգրտությունպահանջողմտավորևֆիզիկականգործողությունների կոորդինացման, ժամանակիմեջտեղավորվելուկամայինկարգավորման գործընթացների մոդելավորում:Միևնույն ժամանակ կարող ենք պնդել, որ արդյունավետ գործարարների իրադրային կողմնորոշման և օպտիմալ վճիռների կայացման կարողությունների դրսևորման հոգեբանական նախադրյալներ են հանդիսանում գործողությունների օպերատիվ ծրագրավորման և զգայաշարժողական ակտերի կամային կագավորման ունակությունները: Գործարարների զգայաշարժական գործողությունների մաքսիմալիաճախության, ներքին մոբիլիզացմանհնարավորությունների, ինչպես նաև նպատակային շեղման ու հոգեկան կայունության հետազոտությունների արդյունքում բացահայտվել են.միշարքօրինաչափություններ.

ա/ գործարար անձի հաջողությունների ձգտման և բարձր նվաճումների պահպանման հիմքում ընկած են գործողություններում նպատակային վերահսկումը, ինքնավերահսկումը, խնդրահարույց իրադրությունում արագ կողմնորոշման և գործողությունների արդյունավետության պահպանման ընդունակությունը:

բ/ գործարարի հոգեկան կայունությունը պայմանավորված է մի շարք գործոններով. նյարդային գործընթացների աշխատունակությամբ, իրադրության համարժեք ընկալմամբ, ուշադրության և օպերատիվ հիշողության կարգավորման հնարավորություններով, կարճ ժամանակամիջոցում աշխատանքի մեջ ընդգրկվելու կարողությամբ:

Գործարար անձանց հոգեկան աշխատունակության, ուշադրության կենտրոնացման, արագ կողմնորոշման ու հիշողության գործընթացների դրսևորման առանձնահատկությունները ուսումնասիրվել են Շուլտեիկարմիր և սևթվերիորոնման աղյուսակի միջոցով(նկ.2):



նկ.2. Հոգեկան աշխատունակության, ուշադրության կենտրոնացման, արագ կողմնորոշման և հիշողության գործընթացների դրսևորման առանձնահատկությունները՝ ըստ Շուլտեի կարմիր և սև թվերի որոնման աղյուսակի:

Գործողությունների կատարման արդյունքումհիմնականխմբիժամանակիցուցանիշը բավականին կարճէ, սխալները քիչ: Կարմիր և սև թվերի որոնման վրա տղամարդիկ ծախսել են 69 ± 1.5 վրկ.՝ միևնույն ժամանակ թույլ տալով 3 ± 0.2 սխալներ, իսկ կանայք 70 ± 2.4, թույլ տրվածսխալները կազմում են՝ 4 ± 0, 3 սակայն քիչ են տարբերվում տղամարդկանց ցուցադրած միջին արդյունքներից: Թվերիորոնմանառավելագույնևնվազագույնցուցանիշներիտարբերությունները կազմումէ $\overline{X}$ =5 վրկ.: Նվազագույնարագությանցուցանիշներիտարբերությունը կազմումէ $\overline{X}$ =6 վրկ.: Ստուգիչ խմբի տղամարդկանց մոտ 8 զույգ թվերի որոնման վրա 5 ± 0.3 սխալի դեպքում ծախսվել է 74±5.1վրկ., որը համեմատած հիմնական խմբի տղամարդկանց ցուցանիշների՝ բավականին ցածր է: Ստուգիչ խմբի կանանց 8 զույգ թվերի որոնման ժամանակը կազմում է 79 ± 2.1՝ կատարելով 6 ±0.5 սխալներ (P<0.001): Կանանց կողմից թույլ տրված սխալները խոսում են նրանց ուշադրության գործընթացների միջին մակարդակի մասին Սակայներկուխմբերումէլնկատվումէայնօրինաչափությունը, որկանանցնյարդային գործընթացներիաշխատունակությունը, իտարբերությունտղամարդկանցմոտստացվածցուցանիշների, ավելիմեծէ: Այսհանգամանքըդրսևորվումէորպեսօրինաչափություն, սեռինբնորոշհատկություն, որըընդհանուրէստուգիչևհիմնականխմբերիհամար: Առաջադրանքիկատարմանժամանակհոգեբանականպաշտպանականմեխանիզմներիակտիվացումը<<մարզավիճակում>>էպահումառաջադրանքիկատարմանողջ,,բանվորական,, համակարգը /հիշողություն, մտածողություն, ուշադրություն, ստեղծագործականերևակայությունևայլն/:

Թեստի արդյունքները հաստատում են այն իրողությունը, որ հիմնական խմբում ընդգրկված գործարարները իրենց բարձր արդյունքները ապահովում են ի հաշիվ իրենց

հոգեկան ոլորտի խորքային կառույցների ֆունկցիոնալ հնարավորությունների:Դրանց հիմքում ընկած են բարձր հոգեկան աշխատունակությունը, առաջադրանքների կատարման ժամանակ ճկուն վարքագիծը, ուշադրության կենտրոնացվածությունն ու հիշողության արդյունավետ գործընթացները:

Հետազոտության ընթացքումբացահայտվել են նաև գործարար անձանց հոգեկանաշխատունակության, նյարդահոգեկանկայունության, հոգեկանգործընթացներիակտիվության առանձնահատկությունների հետ գոյություն ունեցողկապերի փոխպայմանավորվածությունը, որում նույնպես փաստվում է այն հանգամանքը, որ առաջադրվող գործողություններում գործարար անձանց հաջողությունները պայմանավորված են նրանց հոգեմարմնական(психосоматик)համակարգությունների,,աշխատանքային,, կենտրոնների միջև գոյություն ունեցող բարձրակարգ համագործակցության գործառույթներով: Միևնույն ժամանակ հարկ է նշել, որ հիմնականխմբումընդգրկված անձանց բացասականհոգեվիճակներիցուցանիշները ունենցածրարտահայտվածութուն և նվազմանմիտում:Այսինքնկարելիէպնդել, որհիմնականխմբումընդգրկվածգործարարներիբարձրտագնապայնության, նյարդահոգեկանանկայունության, նևրոտիզացմանցուցանիշներըպատճառաբանվումենգործունեությանառանձնահատկություն ների, փոխակերպվողհասարակությանանկայունսոցիալ-տնտեսական, ֆինանսականևայլգործոններիազդեցությամբ:Հոգեբանական առումոն, այդպիսի հակազդեցությունները բնական են, իրավիճակային: Դրանք անձնային առանձնահատկությունների բնույթ չեն կրում:

Ե Զ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

Մասնագիտական գրականության ուսումնասիրություններն ու հետազոտության արդյունքների վերլուծությունները հնարավորություն են տվել կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Անցումային հասարակությունը իր սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական փոփոխությունների համատարած բնույթով հանդիսանում է գործարար հարաբերությունների զարգացման համար անբարենպաստ միջավայր: Նրանում ձևավորվում են ակնառու և քողարկված սոցիալ-տնտեսական, սոցիալ-հոգեբանական փոխհարաբերություններ, որոնք գործարար անձին առաջադրում են բարդ, հաճախ անլուծելի խնդիրներ: Անցումային հասարակությունում գործարար միջավայրը հանդիսանում է բնական ընտրության միջավայր: Վերջինս ուղղակիորեն անդրադառնում է գործարար բնագավառի համաչափ զարգացումների, ինչպես նաև գործարար անձի հոգեկան համակարգի ընդհանուր ակտիվության, հոգեկան հավասարակշռության ու ընդհանուր առողջության գործընթացներն ապահովող համակարգերի վրա:

2. Գործարար անձի գործունեությունը հանդիսանում է ակտիվ ստեղծագործական գործընթաց, որը տեղի է ունենում յուրահատուկ լարվածության պայմաններում, որում աստիճանաբար բացահայտվում և ձևավորվում են նրա մասնագիտական

հնարամտությունները, ստեղծարարությունը, իրադրության հավանական զարգացումների կռահման /անտիցիպացիա/ միտումները: Առանձնահատկությունների այդ համակարգը հանդիսանում է նրա մասնագիտական պիտանելիության /կոմպետենցիա/ հոգեբանական կայուն բաղադրամասերից մեկը:

3. Փոխակերպվող հասարակությունում հաջողակ գործարարի հոգեբանական բնութագիրը ներկայացնող կոնցեպտուալ մոդելի հիմքում ըստ կարևորման առաջնության ընկած են նրա կոգնիտիվ հնարավորությունների, անձի կամային հատկանիշների, մասնագիտական որակների, գործարար հարաբերությունները կոորդինացնող անձնային սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունների, ինչպես նաև անձի սոցիալ-կազմակերպչական հատկանիշների ամբողջությունը:Դրանք հանդիսանում են գործունեության ամենատարբեր պայմաններում արդյունավետության ապահովման անձնային հիմնարար հատկանիշների համակարգ:

4. Գործարար անձանց կայուն հաջողությունների հիմքում ընկած են նրա հոգեկան ոլորտի խորքային նախադրյալները: Դրանց արդյունավետ գործարկման դրսևորումները պայմանավորված են գործունեության պահանջներին համապատասխան՝ գործարար անձի ինքնակառավարման ունակություններով, գործողություններում առաջատար հոգեկան գործընթացների /ուշադրության, հիշողության, մտածողության, ստեղծաարարության, ճշգրիտ որոշումների կայացման/ արդյունավետ ներգրավվման ընդունակություններով: Գործարար անձի հոգեկան ակտիվության այդպիսի դրսևորումները հանդիսանում են որպես անհատական ոճի յուրահատուկ դրսևորում:

5. Գործարար անձանց գործունեության հաջողություններն ու հոգեկան համակարգի կայունությունը պայմանավորված է նրանց հոգեկան աշխատունակությամբ:Այն միևնույն ժամանակ հանդիսանում է գործունեության հիմնական ծանրաբեռնվածությունը կրող համակարգերի արդյունավետ համագործակցման արդյունք: Գործողությունների կատարման արդյունավետությունը կապված է գործարար անձի հաջողությունների կանխատեսման, նրա փորձի արդյունավետ ներդրման, ստեղծարարությամբ ու գործողությունների կատարման հնարամտությամբ:

6. Փոխակերպվող հասարակությունում գործարար անձի հաջողությունների հիմքում ընկած են սթրեսածին պայմաններում նրա հուզական արգելադիմացկունությունը, հարմարման հնարավորությունների բարձր արտահայտվածությունը, գործողություններում արագ կողմնորոշման ու մոբիլիզացիոն կարողությունների ներգրավման առանձնահատկությունները:Վերջինս դրսևորվորվում է անձի կամային կառավարման յուրահատուկ արտահայտվածության ոճով:

7. Անկախտարիքային, սեռայինառանձնահատկություններից՝ ստուգողական խմբի հետազոտվողներիմոտարտահայտվումէհոգեկանաշխատունակությանընդգծվածցածրմակարդակ: Այնդրսևորվումէհետազտվող գործարար անձանց հոգեկանևկենսաբանականոլորտներիգործառութայինհնարավորություններիանկմամբ, նյարդահոգեկանանկայունությամբևսթրեսինկատմամբդիմադրողականությանցածրհնարավորություններով: Գործառութայինհնարավո-րություններիսպառմանմիտումներըհանգեցնումենօրգանիզմիամբողջականությանպահպանմանխաթարմանը, պահեստայինհնարավորություններիաստիճանականսպառմանը:

8. Գործունեության ոլորտում հաջողակ գործարարի ակտիվության հիմքում ընկած են այլ բնագավառներում կուտակած անհատական փորձի նպատակաուղղված կիրառումն ու իրավիճակի պահանջներին համապատասխան հանդուգն որոշումների կայացումը, դրանց ինքնատիպ լուծումների հայտնաբերումը: Վերջիններս պայմանավորված են մտավոր գործընթացների օպերատիվ ակտիվացման և դրանց ֆունկցիոնալ համագործակցության ընդունակություններով /զգայաշարժական մոբիլիզացում, առաջիկա մտավոր գործողությունների կատարման կոնցեպտուալ մոդելի մշակում, դրանցում մտավոր ճիգերի օպտիմալ ներդրում և այլն/:

Ատենախոսությանհիմնականդրույթներնարտացոլվածենհետևյալտպագիրաշխատանքներում:

1. **ՄկրտումյանՎ.Մ.**Միջանձնայինկապերիդրսևորմանհոգեբանականառանձնահատկություններըգործարարհարաբերություններում/ <<ԲանբերԵրևանիհամալսարանի>>ԵՊՀհրատ. Երևան, 2012թ., էջ՝ 76-80:
2. **ՄկրտումյանՎ.Մ.**Անցումայինհասարակությունումգործարարհարաբերություններըկառավարողեկավարիանկարողությանսոցիալ-հոգեբանականհետևանքները / <<Հոգեբանությունըևկյանքը>>Զանգակհրատ. Երևան, 2012թ., էջ՝ 29-32:
3. **ՄկրտումյանՎ.Մ.**Փոխակերպվողհասարակությունումգործարարմիջավայրիարդյունավետղեկավարմանհոգեբանականառանձնահատկությունները / <<Խ.Աբովյանիանվ. ՀՊՄՀ-ի 90-ամյակիննվիրվածգիտաժողովինյութերիժողովածու>><<Մանկավարժ>>հրատ., 2013թ., էջ՝67-70:
4. **ՄկրտումյանՎ.Մ.**Գործարարանձանցգործառութայինհնարավորություններիդրսևորմանհոգեֆիզիոլոգիականառանձնահատկություններըանցումայինհասարակությունում / <<Իմաստություն>> 1(4), Երևան, 2015թ. էջ՝ 178-186:
5. **Մկրտումյան Վ.Մ .**Գործարար անձանց նյարդահոգեկան կայունության դրսևորման առանձնահատկությունները անցումային հասարակությունում / <<Գիտական տեղեկագիր>>N 1-2 (26-27)Երևան, 2016թ., էջ՝ 112-121:
6. **ԳևորգյանՍ.Ռ., ՄկրտումյանՎ. Մ.,**. Անցումայինհասարակությունումարդյունավետգործարարիսոցիալ-հոգեբանականհենքայիննախադրյալներիհետազոտումը / <<Մանկավարժությանևհոգեբանությանհիմնախնդիրներ>>միջբուհականկոնսորցիումիգիտականհանդես, Երևան, 2014թ., էջ՝ 67-74:
7. **ՀակոբյանՆ.Ռ.,ՄկրտումյանՎ. Մ.** Անցումայինհասարակությունումարդյունավետգործարարիսոցիալ-հոգեբանականնկարագիրը / <<Մանկավարժությանևհոգեբանությանհիմնախնդիրներ>>միջբուհականկոնսորցիումիգիտականհանդես, Երևան, 2015թ., էջ՝ 88-95:

МКРТУМЯН ВАЗГЕН МЕЛЬСИКОВИЧ

СОЦИАЛЬНОПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ЭФЕКТИВНОГО ПРЕДПРИНИМАТЕЛЯ В ТРАНСФОРМИРУЮЩМСЯ ОБШЕСТВЕ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03. <<Социальная психология, (межличностные отношения, семейная,возрастная, педагогическая, групповая деятельность)>>.

Защита диссертации состоится 30мая 2019г., в 14 ч. на заседании специализированного совета по психологиии 064 ВАК-а по присуждению ученых степеней при Армянском государственном педагогическом университете имени Хачатура Абовяна, по адресу:0010, г. Ереван, ул. Тигран Меци 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена следующими факторами: 1)окончательно не изучены социально-психологические особенности и условия формирования личности предпринимателя в трансформирующемся обществе, 2) недостаточно исследованы морально-психологические, социально-экономические условия и факторы способствующие возникновению новых людей, которые без особых профессиональных знаний, оказались в новой предпринимательской деятельности, и имеют большие успехи, 3) почти пропущено то обстоятельство, который может выяснить какие особенности и личностные психологические глубинные качества лежат в основе результативности успешного предпринимателя, 4)какова роль и значимость внутренних подсистем, координирующих взаимодействие психофизиологических процессов функциональных возможностей успешного предпринимателя.

Обьектом исследования являются особенности психической сферы обеспечивающих результативность деятельности личности предпринимателя.

Предметом исследования является проявление эмоциональной сферы, уровень притязаний, нервнопсихическая устойчивость, психическая работоспособность, мобилизационные возможности личности предпринимателей.

Цель исследования: изучитьглубинные предпосылки психической сферыобуславливаюшие успехи личности предпринимателей в трансформирующемся обществе.

Задачи исследования:

1. При помощи изучения специальной литературы сделать анализ современных передовых теоретических и практических подходов и научных взглядов, для разносторонного решения данной проблемы.
2. Разработка стратегии организации, выбор методов и контингента, а так же обеспечение условий исследования.
3. Выявить особенности деятельности и отрицательных факторов влияющих на личность предпринимателя.
4. Изучить психические состояния, уровень притязания, стрессоустойчивости и адаптативности личности предпринимателей.
5. Изучить психическую работоспособность, мобилизационные возможности психических процессов личности предпринимателей.

6. Выявить типологическиеособенности а так же обусовленные ими функциональные возможностеи предпринимателей.

Гипотеза исследования: Предпологается, что в трансформирующемся обществе успехи предпринимателя зависят от особых форм координации функциональных возможностей глубинных предпосылок и высокого уровня выраженности функциональных состояний психической сферы предпринимателя.

-предпологается так же, что в основе активации функциональных возможностей предпринимателей лежат особенности нервно-психической устойчивости, уровень притязания, волевой мобилизации, психической работоспособности, а так же возможности координации основных действий, обеспевающих результативность деятельности.

Организация и методы исследования: В процессе исследования были использованы методы психологических опросников, а так же тестов, выявляющие специфику отрицательных факторов трансформирующегося общества, особенности проявления эмоциональных переживаний, уровня притязаний, волевой мобилизаций, психической работоспособности, нервнопсихической устойчивости, а так же типологические особенности личности предпринимателей.

Теоретическая значимость исследования. Системотизированный анализ теоретического материала проблемы результативного предпринимателя трансформирующегося общества, может способствовать раскрытию механизмов психологических закономерностей воздействия социально-психологических, экономических, культурных изменений, и их влияния на специфику проявления психической работоспоспособности, стрессоустойчивости, волевой мобилизации функциональных возможностей личности вообше.

Практическая значимость исследования: Результаты исследования дают возможность создания концептуальной модели успещного предпринимателя трансформируюшегося общества, а так же осуществления процесса психологического отбора успешных предпринимателей. Одновременно создается возможность для определения возможностей психической работоспособности, динамики психической устойчивости и эмоциональных переживаний личности предпринимателей, а так же разработки результативной рабочей программы, для профилактики негативных изменений.

Научная новизна исследования. На основе проведения научного анализа специальной литературы систематизированы условия и механизмы формирования личности успешного предпринимателя в трансформируюшемся обществе. В результате исследований выявлены основные характеристики психофизиологических изменений психической работоспособности, адаптационных возможностей и стрессоустойчивости предпринимателя. Эксперитальным путем выявлены основные закономерности формирования психофизиологческих новообразований в организме личности предпринимателя трансформирующегося обшества.

Достоверность и надежность исследования вытекают из научных требований, предявляемых к психологическим исследованиям. Достоверность и обоснованность теоретических и практических результатов обеспечены методологией изучением теоретических и экспериментальных исследований по проблеме, применением комплекса

методик, адекватно поставленным исходным целям и задачам исследования, достаточным обьемом обследованного контингента.

По теме диссертации опубликовано 7 статьей.

VAZGEN MELSIK MKRTUMYAN

SOCIAL PSYCHOLOGICAL PREMISES OF AN EFFICIENT ENTREPRENEUR IN TRANSFORMING SOCIETY

Thesis submitted for the Degree of Candidate of Psychological Sciences in Field of Expertise: 19.00.03 "Social psychology, (Interpersonal relationship,age,pedagogical, family and group activity)".

The official defence of the thesis will take place at Higher Attestation Commission's 064 Degree-awarding Scientific Council's session on the 30 of MAY 2019 at 14.00 PM Armenian State Pedagogical University after Kh.Abovyan(Address: 0010 Yerevan, Tigran Mets 17).

SUMMARY

Actual relevance of the researchis based on thefollowing factors: 1) the socio-psychological characteristics and conditions of formation of Entrepreneurs personality in the transforming society are not fully explored, 2) insufficiently investigated moral-psychological, socio-economic conditions and factors contributing the occurrence of new people without any professional knowledge of new business activity, having great success, 3) almost missing the fact that clarifies the features and personal psychological depth qualities underlying performance effectiveness of a successful entrepreneur, 4) the role and importance of internal subsystems coordinating the interaction of psycho-physiological processes functionality of successful Entrepreneur.

The object of the researchensures the particularities of mental sphere the effectiveness of the activities of the Entrepreneurs personality.

The subject of the **research** manifestes the emotional sphere, level of aspirations, neuro-psychical stability, mental efficiency, mobilization capacities of Entrepreneurs personality.

The aim of the researchexplores theunderlying premises of mental sphere causing the entrepreneurs success in the transforming society.

The following points have been put forward to fulfill the principal aim.

7. to analyse contemporary theoretical and practical approaches and scientific views, to versatile solutions to this issue.

8.to develop a strategy of organization, methods and contingent selection and also to ensure research conditions.

9.to identify the features of activity and negative factors affecting the Entrepreneur's personality.

10. to explore mental conditions, level of aspiration, stress resistance and adaptation of Entrepreneur's personality.

11. to explore mental efficiency, mobilization capacities and severity of mental processes of Entrepreneur's personality.

12. to find out typological particularities due to Entrepreneurs functionality capability as well.

The hypothesis postulated.It is assumed that in the transforming society the Entrepreneur's success depends on the specific forms of coordination, which functions underliend premises and a high level of expression of the functional states of the entrepreneur's mental sphere.

Also it assumed, that entrepreneur's functions activation is based on especially nervous and mental stability, level of aspiration, volitionalmobilization, mental efficiency, as well as coordination possibilities of key actions ensuring the effectiveness of the activities.

Methods of the research include: psychological methods - questionnaires, as well as tests, revealing pecularities of negative factors of transforming society, particular manifestations emotional experiences, level of aspiration, volitionalmobilization, mental efficiency, neuro-psychological stability and typological particularities of Entrepreneur's.

The theoretical input of the research:Analysis of theoretical material contributes to the generalization of different points of views of domestic and foreign scientists, concerning disclosure of mechanisms and psychological aspects of human capabilities in transforming society and mobilization of functional abilities and the individual in particular.

The practical contribution of the research:The results of empirical research gives an opportunity to create a concept model of successful entrepreneur of transforming society, as well as implementation process of psychological selection of successful entrepreneurs.

The innovative approaches and actual novelty of the research: The studies identified the main characteristics of the psycho-physiological changes in mental performance, adaptive capacity entrepreneur's of .stress resistance. Identification of the main legitimacy of formation psycho-physiological neoplasms in the body of personality of entrepreneur's in transforming the society.

The reliability and validity of theoretical and practical findings are provided by the relevant research methodology, as well as by investigations of theoretical and experimental researches conducted on the issued theme.

The variety of aspects covered in the research has been submitted to the public discussion through **six articles** published priorily to the public defence of the thesis.